

որ համաձայն էր մովսիսական օրինաց
(ԵԼԲ, ԻԲ, 30):

Այդպիսի մտոց անսրբութեան պատճառն արիւնն էր՝ որ անոնց մէջ կը մնար: Շնորհալին գատկական գառին արեան ճաշակունի արգիլելու ժամանակ կ'ըսէ՝ թէ արիւնը կերողը մեռելոտի կերած կը համարուի. «զի արիւնն առնէ պիղծ զմեռելոտին եւ անուտելի՝ որ ի նմին մնայ եւ ոչ ելանէ»: Եւ կը յիշեցնէ աստուածային պատուէրն առ Նոյ՝ միսն արեամբ չուտելու (Ընդհ. 160):

Բոլոր ընտանի կամ վայրենի անասունք, որոնք չէին ուտուիր հին օրինաց մէջ, արգելուած էին նաեւ Հայոց համար: Վերոյիշեալ վկայութեանց մէջ անսուրբ էր ձիոյ կաթը, որովհետեւ սոյն կենդանին իսկ «պիղծ» էր, ինչպէս տեսանք: Այսպէս նաեւ վանական վրդ. իւր աշակերտօք գերի տարուելով թաթարաց, երբ առաջարկեցին իրենց նոյն անասնոյն մսէն, ասոնք մերժեցին՝ ըսելով. «Մեք ձիոյ միս ոչ ուտեմք» (Կիր. 133): — Իւշոյ հին խտրութիւնն ալ կը պահուի դեռ՝ կատուի հետ միասին, զորս առ հարկի կերան Սսեցիք իրենց 1375 յ պաշարման առթիւ (Սիս. 228): — Խոզը, երբեմն ուտելի, այս շրջանին դեռ նոյնպէս է Շնոր-